ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 214 - Ա

ք.Արտաշատ

„21" Օգոստոսի 2023թ.

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 129-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 9-րդ, 12-րդ և 17-րդ կետերով՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող «Լանջազատի ԱԱՊԿ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2023 թվականի օգոստոսի 22-ին ժամը 14:00–ին կայանալիք մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Մրցույթը կազմակերպել մարզպետի աշխատակազմի նիստերի դահլիճում, մրցույթի արդյունքները ներկայացնել մարզպետին:

Восстановимая подпись

ՄԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 **Ս. ԹԵՎՈՆՅԱՆ**

Հավելված
ՀՀ Արարատի մարզպետի
2023 թ. օգոստոսի 21
N 214-Ա որոշման

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

հանձնաժողովի նախագահ՝

Սեդրակ Թևոնյան - Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետ

հանձնաժողովի քարտուղար՝

Սուսաննա Կտրակյան - Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ

հանձնաժողովի անդամներ՝

Ծաղկանուշ Սարգսյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի էլեկտրոնային առողջապահության ներդրման բաժնի ղեկավար

Մարիամ Սարգսյան - Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Արարատ» մասնաճյուղի տնօրեն

Կարեն Վարդանյան - «Ազգային բժշկական պալատ մասնագիտական միություն» ՀԿ-ի խորհրդի անդամ

Հրաչ Դավթյան - Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

Մարգարիտա Մարգարյան - Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ

Восстановимая подпись

X

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Подписано: MKRTCHYAN ARTUR 3414870525 Ա. ՄԿՐՏՉՅԱՆ